ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

Հեռ. (+374 10) 20-94-02

№ 726
«13» 09 2023

Որոշում N 726

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/86»

Մասնակից՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ

/ՀՎՀՀ՝ 01052798, գործունեության հասցե՝ ք. Երևան, ք.Երևան, Գայի պ.,51/5, հեռ. /010/ 62 49 66, donernorq@yandex.ru /

1. «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշում

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տնտեսական նշանակության ապրանքների և կահույքի մասերի ձեռքբերման նպատակով 31.07.2023թ. հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/86» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն (այուհետև նաև՝ Մասնակից) 17-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է ընտրված մասնակից: Սույն թվականի օգոստոսի 31-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/86-3 պայմանագրի նախագիծը Պատվիրատուի կողմից ծանուցվել է «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ստորագրված պայմանագիրն ու պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումները, ուստի զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ)

որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ելնելով վերոգրյալից, ակնհայտ է, որ գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով իր կողմից հաստատված պայմանագրի օրինակն ու պայմանագրի և որակավորման ապահովումները, զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ԱՐԱՄ ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Եղիազարյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102/